

**ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ**

20) Ի՞նչ կ'ըսեն եկեղեցւոյ հայրերը Ա. մկրտութեան խորհուրդի անհրաժեշտութեան եւ կշառակութեան մասին:

Չորրորդ օգուտը, որովհետեւ կը բուժէ հոգեւոր հիւանդութիւնը, ինչպէս եղիսէն մաքրեց Նէեման Ասորիին Յորդանան գետի մէջ լուացուելով եւ ազատելով բորոտութենէն, որը հոգիի մեղքերը կը խորհրդանշէ:

Հինգերորդ օգուտը, որ սատանայի բոլոր գործերը կը խափանէ, որովհետեւ կախարդները, որոնք մարդու կերպարանքը, ոչ թէ ըստ էութեան, այլ՝ երեւոյթապէս կը փոխեն իշու կամ շան, երբ ջուրի մէջ կը մտնեն, կը բժշկուին եւ մարդու առաջին կերպարանքը կը ստանան:

Վեցերորդ օգուտը, որովհետեւ աւազանի ջուրը կը մարէ դժոխքի կրակը անկէ՝ ով որ կը մկրտուի, ինչպէս ջուրը՝ այս կրակը:

Եօթներորդ օգուտը, որովհետեւ ինչպէս ջուրը կ'ընկղմէ մարդուն, նմանապէս մկրտութեան ջուրը՝ սատանային, ինչպէս Փարաւոնին ծովու մէջ ընկղմեց:

Ութներորդ օգուտը, որովհետեւ ջուրը կենդանութիւն կու տայ բոյսերուն եւ տունկերուն, այդպէս ալ աւազանի ջուրը մեղքերով մեռածներուն հոգիով կը կենդանացնէ, ովքեր կը մկրտուին ի փառս՝ Քրիստոսի մեր Աստուծոյ»:

21) Ի՞նչ կը պահանջուի չափահաս մկրտուողէն Ա. մկրտութեան համար:

**ԱՂԱՆԴԱԴՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**

**ՔԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ**  
**13. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ**

Նախ՝ Աստուածաշունչը որեւէ տեղ չըսեր, թէ Աստուած աշխարհի իշխանութիւնը կամ կառավարութիւնը Սատանային յանձնեց: Ան մարդուն յանձնեց (Ծնն. 1.26-28) թէեւ գիտէր, թէ մարդիկ միշտ չէ որ արժանի ձեւով պիտի գործածէին իրենց վստահուած այդ իշխանութիւնը: Իսկ աշխարհի թագաւորութեանց ու պետութեանց, Երեմիայի մարգարէութեան մէջ Աստուած ինք կ'ըսէ. «Ե՛ս եմ, որ բոլոր երկիրները տուեր եմ իմ ծառայիս՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին: Դանիէլի մարգարէութեան մէջ Աստուծոյ համար կ'ըսուի. «Ա՛ն է ժամանակները եւ ժամերը փոխողը, թագաւորները իջեցնողը եւ թագաւորներ դնողը» (Դն. 2.21), «Քարձեայն է, որ կը տիրէ մարդոց թագաւորութեան վրայ, եւ որոնք որ ուզէ՝ կու տայ գայն, եւ մարդոց մէջ անարգը անոր վրայ» (Դն. 4.17):

Արդ, յայտնապէս՝ իշխանութիւնները, կառավարութիւնները Աստուծոյ հովանիին տակն են, եւ ո՛չ թէ Սատանային:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

**ՀԱՍՅԷ.**

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ քերթ



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 ԹԻԻ 42

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍԱՏՈՒՄԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ  
Ես. 20.2-21.6: Գղ. 4.3-18:  
ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 4.14-24

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին եւ գովասանքին:

Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օրը ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու օրուան ընթերցումը, իրեն տուին Եսայի Մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը, ուր կ'ըսէր. «Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օժեց զիս եւ զրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրերուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին. եւ յայտարարելու թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

Ապա գիրքը գոցեց, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ. «Այս մարգարէութիւնը, որ դուք լսեցիք ահա այսօր իրականացաւ»: Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ, եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ կ'ըսէին. «Այս մարդը Յովսէփի որդին չէ՞»:

Յիսուս ըսաւ. «Անտարակոյս ինձի պիտի ըսէք հետեւեալ առածը: «Բժիշկ, դուն քեզ բժշկէ»: Եւ պիտի ըսէք. «Ինչ որ լսեցիք, թէ գործեր ես Կափառնաւումի մէջ, այստեղ՝ քու քաղաքիդ մէջ ալ կատարէ»: Եւ աւելցուց. « Բայց դուք ալ գիտէք, որ մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի»:

**ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ (Սաղմոս 13)**

Տէր, մինչեւ ե՞րբ զիս պիտի անտեսես, մինչեւ ե՞րբ երես պիտի դարձնես ինձմէ: Մինչեւ ե՞րբ պիտի տագնապիմ, եւ ամէն օր տրտմութեամբ մաշիմ. մինչեւ ե՞րբ թշնամիս յաղթանակ պիտի տանի իմ վրաս: Տե՛ս եւ պատասխան տու՛ր, Տէ՛ր, իմ Աստուած, լուսաւորէ՛ աչքերս, որպէսզի մահուան ֆունով չՖնանամ: Չըլլայ որ թշնամիս ըսէ. «Յաղթեցի՛ իրեն», կամ՝ նեղիչներս ուրախանան անկումովս: Ես ֆու ողորմութեանդ վստահեցայ. սիրտս ֆու փրկութեամբդ պիտի ցնծայ: Քե՛զ պիտի երգեմ, ո՛վ Տէր, դուն՝ որ ինձի բարիք ըրիր:

ՍՐՔՈՑ ԱԻԵՏԱՐԱՆՉԱՅՆ՝  
ՄԱՏԹԷՈՍԻ, ՄԱՐԿՈՍԻ,  
ՂՈՒԿԱՍՈՒ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ

**Մատթեոս Աւետարանիչ**

Մատթեոս առաքեալ պաշտօնով մաքսաւոր, աշակերտներուն մէջ կը ներկայացնէ հրեական ժողովուրդի այլ դասակարգ մը: Մաքսաւորները հրեական ընկերութեան մէջ հաշտ աչքով չէին դիտուեր: Անոնք Հոռոմեական կայսրութեան պաշտօնեաներ էին եւ ժողովուրդին վրայ դրուած տուրքերը կը հաւաքէին, եւ աւելին, շահագործելով իրենց պաշտօնը աւելիով կը գանձէին ժողովուրդէն:

Մատթեոս առաքեալ նաեւ կոչուած է Ղեւի (Մր. 2:14): Ան իր անունը կրող աւետարանով, ուր բազմաթիւ մէջբերումներ կը կատարէ Հին Կտակարանի գիրքերէն, կը փորձէ հրեայ ժողովուրդին փաստել, թէ սպասուած Մեսիան Յիսուսն է:

Կ'ըսուի, թէ Մատթեոս քարոզած է Եթովպիոյ կամ Պարսկաստանի մէջ, ուր նահատակուած է:

**Մարկոս Աւետարանիչ**

Մարկոսի գրած Աւետարանը, բաղդատմամբ միւս աւետարաններուն, համառօտ եւ կարճ ու կտրուկ ոճով գրուած Աւետարան մըն է: Ան հնագոյն աւետարանն է եւ ուղղուած է Հռոմի քրիստոնեաներուն, զՔրիստոս ներկայացնելով բարձր հեղինակութեան եւ իշխանութեան տէր անձ մը՝ Մարդու Որդին:

Մարկոս, որու հրեական անունը Յովհաննէս էր, ընկերակիցը կ'ըլլայ Պողոսի եւ Բառնաբայի, առաքելական առաջին քարոզչութեան ընթացքին եւ սակայն կէս ձգելով առաքելութիւնը կը վերադառնայ Երուսաղէմ: Ապա Բառնաբայի հետ կը մեկնի Կիպրոս եւ աւանդութիւնը կ'ըսէ, թէ ան կ'անցնի Եգիպտոս եւ կը հիմնէ Աղեփսանդրիոյ եկեղեցին:

Մարկոս առաքեալի մայրը նոյնպէս կ'ըլլայ գործունեայ հաւատացեալ քրիստոնեայ մը, որուն տունը կը դառնայ քրիստոնեական արարողութիւններ կատարելու աղօթավայր մը:

**Ղուկաս Աւետարանիչ**

Ղուկաս Աւետարանի եւ Գործք Առաքելոց գիրքի բացայայտ հեղինակը եղած է նոյնիմի Ղուկաս առաքեալ, որ Պողոս Առաքեալի առաքելական քարոզչութեան ընթացքին ընկերակից եղած է անոր եւ աշխատած անոր հետ քրիստոնեութեան տարածման քարոզչութեան մէջ:

Ղուկաս ուսումով եղած է բժիշկ եւ իր ունեցած իւրաքանչեւ գիտական ծանօթութեամբ, իր գրած գիրքերու մէջ նոյնիսկ կը յիշէ քրիստոսի բժշկած հիւանդութիւններուն անունները եւ զանազան մանրամասնութիւնները, գորս չեն գտներ միւս աւետարաններուն մէջ: Ան աւետարանը գրի կ'առնէ բազմաթիւ ծանօթութիւններ քաղելով Քրիստոսի մասին, նոյնիսկ հարցուփորձելով Աստուածամայր կոյսը, որով կարելի պիտի ըլլայ արձանագրել Քրիստոսի մանկութեան եւ պատանութեան շրջանին կատարուած դէպքերը: Ղուկասի Աւետարանը ուղղուած է բոլոր նորադարձ քրիստոնեաներուն:

Ղուկասի ծննդավայրին մասին մի քանի կարծիքներ կան, բայց առաւելաբար ընդունուած է, թէ ան Մակեդոնիայի Փիլիպպէ քաղաքէն է եւ հետեւաբար յոյն է: Ան ընկերացած է Պողոսին նոյնիսկ մինչեւ Հռոմ, ուր գրած է իր Աւետարանը եւ ապա Գործք Առաքելոց գիրքը:

**Յովհաննէս Աւետարանիչ**

Առաքեալներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ նանչուած է Սիրելի Աշակերտ անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի եռամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախճալով կը լքեն զՔրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրոյն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի խնամքին եւ այդպիսով կ'աւանդէ իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծանօթ է իր անունը կրող սփանջի աւետարանով՝ Աւետարան Ըստ Յովհաննէսի: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա աքտրեայ կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են Յայտնութիւն Յովհաննէսի գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելադրէ կեանքը ապրիլ նշմարութեամբ ու սիրով: Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ Քրիստոսի 100 թուականին:

**ՅՈՒՍԱՀԱՄՏ ԵՍ, ԴԻՄԷ՝ ՏԻՐՈՋ  
ՍԱՀՄՈՍ 28**

Տէ՛ր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ: Դո՛ւն ես իմ պատասխանս: Ականջներդ մի՛ փակեր. լուռ մնալդ պատճառ կ'ըլլայ, որ ես ողջ-ողջ գերեզման իջնեմ:

Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգնութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէպի սուրբ տաճարդ կը բարձրացնեմ:

Չիս մի՛ դատեր ամբարիշտներուն հետ. անոնց, որոնք չարիք կը հասցնեն ուրիշին, որոնք իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մարդոց հետ, մինչ իրենց սիրտերուն մէջ չարութիւն կայ:

Պատուիսսէ՛ զանոնք իրենց գործերուն համաձայն, տո՛ւր արժանի պատիժը իրենց չարսիրտ վարմունքին: Իրենց ըրածին համեմատ վարուէ՛ իրենց հետ, հատուցանելով իրենց այն՝ ինչ բանի որ արժանի են:

Քանի անոնք կ'արհամարհեն Տիրոջ գործը եւ ինչ որ ան ստեղծեց Տէրը զանոնք պիտի կործանէ այնպիսի ձեւով, որ ալ երբեք չկանգնին:

Օրհնեա՛լ է Տէրը, որ աղօթքիս պատասխանեց:

Չօրութիւնս է ան եւ իմ պաշտպանս: Ես իրեն կը վստահիմ: Իրմէ՛ կու գայ օգնութիւնս եւ իմ սիրտս կը ցնձայ: Հետեւաբար իմ երգովս անոր գոհութիւն պիտի յայտնեմ:

Տէրը իր ժողովուրդին զօրութիւնն է եւ ապաւնը ու փրկիչը՝ իր օժեալին:

Տէ՛ր Փրկէ՛ եւ օրհնէ՛ քու ժողովուրդդ, որ քու ժառանգութիւնդ է. դուն հովուէ՛ զանոնք եւ ուսիդ առած՝ առաջնորդէ՛ մինչեւ յաւիտեան:

**ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՄԻ՛ ՎԻՃԻՐ**

Կրնա՞ս Ամենակարողին ըսել. «Տէ՛ր, դուն կարող չես գորութիւն տալ ինձի՛. Չարին դեմ պայքարելու համար»: Կրնա՞ս Ամենատուրբին ըսել. «Տէ՛ր, դուն չես կրնար զիս սրբել մեղքերէս, որովհետեւ մեղքերս անհունօրէն շատ են եւ անսահմանօրէն՝ սեւ»: Կրնա՞ս Բարձրեալին ըսել. «Տէ՛ր, դժուար է զիս բարձրացնել յուսահատութեան անդունդէն»: Կրնա՞ս աշխարհի Ապաւենին ըսել. «Տէ՛ր, երբ մարդիկ վրաս յարձակին, երբ անոնք զիս գրպարտեն, կը վարանիմ Ապաւենիդ ապաւինիլ»: Կրնա՞ս Ամենագէտին ըսել. «Տէ՛ր, դուն չես գիտեր թէ ի՛նչպիսի նեղութիւններէ կ'անցնիմ»: Կարելի՞ քան է Ամենագէտին ըսել՝ չես գիտեր, Սուրբին ու Սրբողին ըսել՝ չես կրնար սրբել, Ամենակարողին՝ անկարող ես: Մեղդ Յիսուսի արիւնէն աւելի հզօր չի կրնար ըլլալ:

**ՄԻՍԱՄԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ**

Տէ՛ր, ողորմէ՛ բազմամեղիս, ապաշխարութեան դարձի՛՝ բեր վտարանդի գերիս եւ մտցո՛ւր արքունական փառքին մէջ: Առաջնորդէ՛ Քու մօտդ գալու վերնային ճանապարհով, որովհետեւ եթէ դուն չառաջնորդես, ես չեմ կրնար գալ, որովհետեւ դո՛ւն իսկ ըսիր. «Ոչ որ կրնայ մօտս գալ, եթէ Հայրս չքաշէ զայն»:

Եւ արդ, Տէ՛ր իմ գթած, մի յիշեր իմ բազում պիղծ մեղքերս եւ մի՛ անտեսեր Քու ծառայ, մի՛ ձգեր զիս որ մնամ նոյն չարիքին մէջ եւ դեգերիմ աշխարհիկ կեանքի մէջ, այլ ինչպէս փախած ծառայի ետեւէն ընթանալով՝ այնպէս զիս ե՛տ բեր, թողութիւն տուր յանցանքներուս եւ հաղո՛րդ դարձո՛ւր Քու սուրբ կամարաներուդ: Ե.Ա